ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ՀԱՅԱԶԵՐԾՈՒՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Մ. Ե. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Պատմության ժամանակակից թուրք կեղծարարները նենգաբար ժխտում են արևմտահայության 1915 թ. արյունալի սպանդը։ Աղավաղելով առաջին համաշխարհային պատերազմի տարիների հայ ժողովրդի պատմությունը՝ նրանք եղեռնը ներկայացնում են իբրև պատերազմով պայմանավորված տեղահանություն։ Այս խեղաթյուրումն առաջնահերթ է դարձնում ոչ միայն առաջին աշխարհամարտի տարիների, այլև արհավիրքի նախօրեի երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության լուսաբանումը, քանի որ Մեծ Եղեռնը նախապատրաստվել է հենց այդ ժամանակ՝ իբրև պաքերական կոտորածների թուրքական քաղաքականության հերթական բռնկում, միայն ավելի մեծ ընդգրկումով։

1908 թ. զինվորական հեղաշրջմամբ անցնելով իշխանության գլուխ, երիտթուրքերը լուծեցին օսմանյան նախորդ բռնակալների՝ այլազգիների հալածման քաղաքականության հետևանքով կայսրությունում առաջացած սրված ազգային հարցը։ Ոտնահարելով այլադավան ու այլախոս ժողովուրդների շահերը, նրանք հանդես եկան օսմանիզմի, իսկ 1912—1913 թթ. Բալկանյան պատերազմից հետո՝ պանթուրքիզմի մարդատյաց գաղափարախոսությամբ։

Հակահայ քաղաքականության առաջին ապացույցը երիտթուրքերը տվեցին սահմանադրության հաստատման հենց հաջորդ տարին՝ 1909 թ. ապրիլին, Ադանայի հայության կոտորածով։ Ժամանակակիցներից մեկն այսպիսի վկայություն է թողել. «Հարվածը՝ ծանր, արյունը՝ հորդահոս, եղեռնը՝ քստմնելի ու տառապանքը՝ անհանդուրժելի։ Ահա այն վիճակը, որուն ենթարկվեցավ Ադանա իր շրջակայքով, օսմանյան հայրենիքի եղբայրակցության շրջանի մեջ։

Արյունոտ համբույր»[1]։

Երիտթուրքական կառավարող շրջանները ոչինչ չարեցին անլուր զրկանքների դատապարտված արևմտահայ աշխատավորության կյանքը բարելավելու համար, ավելին՝ հայաջինջ քաղաքականության բոլոր փորձված լծակները գործադրելով, հայկական վիլայեթներում ամրապնդեցին անարդարության ու օրինազանցության փաստացի տիրապետությունը։ Նկարագրելով արևմտահայերի անագորույն կացությունը, «Մշակի» թղթակից Լ. Սարգսյանը գրում էր. «Կարելի է անպատիժ տալ հայի գլխին, վնդել նրան իր հողից, խլել նրանից ընտանիք, պատիվ և այդ անիրավությունների դիմաց քրքիջով նրան ցույց տալ թուրքական «դատարանները», որոնց գոյությունը քստմնելի ծաղր է ու նախատինք արդարադատության գաղափարի»[2]։

Երիտթուրքերի համար պանթուրքիզմը գործողության ծրագիր էր, որն իրագործելիս կանգ չէին առնում ոչ մի միջոցի առաջ։ Թուրանական լայնածավալ տերություն ստեղծելու ցնորական պլանների իրագործման ճանապարհին ի դեմս հայ ժողովրդի նրանք տեսնում էին գլխավոր խոչընդոտ։ Սակայն հնարավորություն չունենալով նրան հենց սկզբից ֆիզիկապես բնաջնջել, երիտթուրքերը ձեռնամուխ եղան Արևմտյան Հայաստանում անապահով ու սպառնալի կացությունը մշտնջենավորելու և տնտեսական սնանկաց-

1. Մուշեղ Եպիսկոպոս, Ադանայի ջարդը և պատասխանատուները, Կահիրե, 1909 թ., էջ 3։

2. Մշակ, 9. I. 1913 թ.։

ման ենթարկելու միջոցներով արևմտահայությանը իր պատմական բնօրրանից դուրս մղելուն։ Պանթուրքիստները նպատակ ունեին հանգիստ ու անաղմուկ, առանց շարդերի ու կոտորածների, որոնք կարող էին առաջ բերել մեծ տերությունների միջամտությունը, բնաջնջել հայ տարրը, աստիճանաբար տնտեսապես ոչնչացնել նրան, նրա հետագա գոյությունը դարձնել անհնար և ամբողջովին դուրս մղել նրան իր պատմական, տոհմական հողերից...»[3]։

Արևմտյան Հայաստանում գործվող ոճիրներին երիտթուրքական կառավարությունը նայում էր իբրև անտարբեր հանդիսատես։ Վանի ռուսական փոխհյուպատոս Ս. Օլֆերևը 1912 թ. օգոստոսի 30-ին դեսպան Մ. Գիրսին գրում էր. «Սարսափելին այն է, որ ոչ մի հանցագործություն չի բացահայտվել»[4]։

Հայկական վիլայեթների թուրքական վարչական ապարատն իր գոյությունը զգացնում էր միայն հարկահանության ժամանակ։ Ողբերգականն այն էր, որ «խեղճ հայերը,—ինչպես 1914 թ. ապրիլի 22-ին կաթողիկոսին գրած նամակում նշում էր Մուշի առաջնորդարանի քարտուղար Տիգրան Հարությունյանը,—զարմանն մինչև աշուն կաշխատին միայն կշտացնելու համար գազանաբարո մարդասպաններ, որ միշտ կսպառնան զանոնք բնաջինջ ընել»[5]։

Երիտթուրքական կամայականությունների պայմաններում ամենուր ոտնահարվում ու արհամարհվում էին դարեր շարունակ տառապանքի ծանր շղթաները կրած արևմտահայության ազգային ու կրոնական զգացումները։ 1912 թ. սեպտեմբերի 8-ին Ադանայի ռուսական փոխհյուպատոս Մավրոմատին դեսպան Մ. Գիրսին գրում էր. «Բավական է մարդը քրիստոնյա լինի, որպեսզի նրա գործը տանուլ տրվի գատարանում և որպեսզի նրան կախաղանի ճանաչեն ամեն անգամ, երբ հակառակ կողմը մահմեդական է»[6]։

Հայկական վիլայեթները լիակատար անիշխանության էին մատնված։ Գավառում տեր ու տնօրինություն էին անում թուրք ու քուրդ ավազակապետերն ու ցեղապետերը, իսկ քաղաքում՝ թուրք պաշտոնյաները։ Էրզրումի ռուսական հյուպատոսության խորհրդական Վիշինսկին 1912 թ. նոյեմբերի 28-ին Կովկասի ռազմական օկրուգի շտաբ ներկայացրած զեկուցագրում նշում էր. «Առանց չափազանցությունների կարելի է ասել, որ Թուրքիայի արևելյան վիլայեթների հայ բնակչության դրությունը ոչնչով լավ չէ համիդյան ժամանակներից, ընդհակառակը, անգամ վատ է. նախկինում գոնե ինչ-որ իշխանություն կար, իսկ այժմ գավառներում լիակատար անիշխանություն է տիրում»[7]։

Երիտթուրքական տեղական իշխանությունները, առաջնորդվելով «բաժանիր, որ տիրես» սկզբունքով, ամեն ինչ անում էին արևմտահայության անապահով կացությունը քրիստոնյա և մահմեդական բնակիչների «թշնամական» փոխհարաբերություններին վերագրելու համար։ Հակահայկական տրամագրություններ հարուցելու ամենահարմար միջոցը հայերի՝ Ռուսաստանի գործիք դառնալու և օտարերկրյա միջամտություն հրավիրելու զրպարտություններն էին։ Ամենուր տարածվում էին կեղծ լուրեր, թե իբր Ռուսաստանը նախապատրաստում է հայկական ապստամբություն ու դրա հա-

---

[3] Биржевые ведомости, 10. I. 1913.

[4] Архив внешней политики России (далее—АВПР), ф. Посольство в Константинополе 1912 г., оп. 517, д. 1603, г. Ван, л. 45.

[5] ՀԽՍՀ պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև ՀԽՍՀ ՊՊԿԱ), ֆ. 57, ց. 5, գ. 66, թ. 12։

[6] Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов, под редакцией М. Г. Нерсисяна, Ереван, 1983, с. 231—232.

[7] Центральный государственный военно-исторический архив СССР (далее—ЦГВИА СССР), ф. 2000 ГУГШ, оп. 1, д. 7716, л. 433.

մար արագորեն զինում է հայերին[8]։ Այս պրոպագանդիստական աշխատանքներն ուժեղացան բալկանյան պատերազմների ժամանակ, երբ թուրք աշխատավորությունը «դժգոհ հարկերի վերջին ծանրացումներից, ճնշումներից ու զորահավաքներից, բարձրաձայն իր դժգոհությունն ու բողոքն էր հայտնում կառավարության դեմ»[9]։ Այսպես, հայերի ապստամբության ու ռուսական առաջխաղացման սպառնալիքների մասին սուտ տեղեկություններ տարածելու և կանխամտածված գրգռումներ առաջ բերելու շնորհիվ՝ երիտթուրքերը ոչ միայն արդարացնում էին ապօրինի հարկերի գանձումն ու անվերջ զորահավաքների անցկացումը, այլև իրենց ձեռնտու հունով փոխում էին թուրք աշխատավորության սոցիալական պայքարի սուր ծայրը։ Այս քաղաքականությունն առավել ցայտուն դրսևորվեց քրդական շարժման նկատմամբ վերաբերմունքով։

1913—14 թթ. Օսմանյան կայսրության մի շարք շրջաններում վերելք էր ապրում քրդական ազգային-ազատագրական շարժումը, որն ընդգրկել էր նաև Արևմտյան Հայաստանի քրդաբնակ վիլայեթները։ Արդեն 1912 թ. դեկտեմբերին Վանի ու Բիթլիսի վիլայեթներում շրջում էին ագիտատորներ, որոնք քուրդ բնակչությանը կոչ էին անում ապստամբել կառավարող վարչակարգի դեմ[10]։ Քրդական շարժման ուժեղացումը մահացու վտանգ էր Բալկաններում պատերազմող երիտթուրքական կառավարության համար։ Իթթիհատականները գնահատելով շարժման ամբողջ վտանգավորությունն օսմանյան կազմալուծվող կայսրության համար և զրկված լինելով այն հենց սկզբից արյան մեջ խեղդելու հնարավորությունից, գործադրեցին թուրք սուլթանների փորձված քաղաքականությունը՝ կրոնական մոլեռանդության հողի վրա պայքարն ուղղել քրիստոնյա բնակչության դեմ։ Ազգամիջյան թշնամանքի ու կրոնական խտրականության հիմքի վրա հայ և քուրդ ժողովուրդների միջև հակասությունների բորբոքումը դարձավ երիտթուրքական կառավարող շրջանների քաղաքականության հենքը։ Առաջին հերթին գործադրվում էր ռուսական հարձակման առասպելը։ Ընտրվում էին հատուկ գործակալներ, որոնք քրդական բնակչության շրջանում ռուսական բրավումը ներկայացնելով որպես քրդերի ստորադասում ռայա հայերին, բացատրում էին մահմեդական ֆանատիզմ ու սրբազան պատերազմի էին կոչում ընդդեմ Ռուսաստանի։ «Բիրժևիե վեդոմոստի» թեռթի թղթակից Ա. Բերեզովսկին (Տ. Օլգենին)[11] վկայում էր, որ թուրքական պառլամենտի երկու նախկին նշանավոր պատգամավորներ քրդաբնակ վայրերում զբաղված էին հակառուսական ու հակահայկական պրոպագանդով[12]։

Երկու հարևան ժողովուրդներին միմյանց դեմ լարելու երիտթուրքական նենգամիտ քաղաքականությունն ակնառու դրսևորվեց քրդական ավազակախմբերի նկատմամբ դիրքորոշմամբ։ Իթթիհատական պարագլուխները հան-

---

8 См. АВПР, ф. Посольство в Константинополе, оп. 517/2, д. 3724, л. 17—18, 33.

9 АВПР, ф. Политархив 1913 г., оп. 482, д. 3460; л. 70.

10 ЦГВИА СССР, ф. 2000 ГУГШ, оп. 1, д. 1716, л. 393—394.

11 Ինչպես Արդուլ Համիդը, այնպես էլ երիտթուրքերը արգելում էին որևէ օտարերկրյա թղթակցի կամ ճանապարհորդի Արևմտյան Հայաստանում ուսումնասիրություններ կատարել։ Ա. Բերեզովսկին ժամանակի եղակի թղթակիցներից ու հրապարակախոսներից մեկն էր, ում հաջողվեց 1913 թ. փետրվար-մայիս ամիսներին լինել հայկական բոլոր վեց վիլայեթներում։ Իր տպավորությունները նա շարադրել է «Անհետացող Հայաստան» ընդհանուր խորագրով մեկ տասնյակից ավելի հոդվածներում, որոնք տպագրվեցին «Բիրժևիե վեդոմոստի», «Ռուսկոյե սլովո» թերթերում և անդրկովկասյան մամուլի էջերում։ Ռուս հրապարակախոսը նույն թեմայով դասախոսություն է կարդացել Թիֆլիսում և Բաքվում։ Այդ մասին մանրամասն տե՛ս Ա. Հ. Զաքարյան, Ռուս հրապարակախոս Տ. Օլգենինը Հայաստանի և Հայկական հարցի մասին (Պատմա-բանասիրական հանդես, 1989, № 4, էջ 66—84)։

12 Մշակ, 29. V. 1913։

ցավոր թողտվությամբ ու խրախուսանքով էին վերաբերվում քրդական թալանատենչ ավազակախմբերի ոճիրներին։

Երիտթուրքերն իրենք էին զինում քուրդ ավազակախմբերին և ուղղում արևմտահայերի դեմ։ Ականատեսներից մեկը պատմում է ժամանակին բնորոշ հետևյալ դեպքը։ Երբ Խիզանի քրդերը Բիթլիսի վալի Ալի փաշայից զենք պահանջեցին, հայերը, իմանալով այդ մասին, հայտնեցին ռուսական հյուպատոսին։ Վերջինս վճռականորեն բողոքեց։ Թեև վալին առերես հրաժարվեց, սակայն զենքը տվեց։ «Բիթլիսից Խնուս ուղարկվեց փոստ, որին վալիի հրամանով, պետք է ուղեկցեր 115 զինվորից բաղկացած ջոկատ։ Ճանապարհին քրդերը, ըստ վալիի բացատրության, «ջոկատը կանգնեցրել ու զինաթափել են»։ Մի քանի օր հետո այդ նույն պատմությունը կրկնվեց արդեն 150 մարդկանց հետ և եթե այն չկրկնվեց երրորդ անգամ, ապա միայն ռուսաց հյուպատոսի վճռական սպառնալիքների շնորհիվ»[13]։

Քրդական ավազակախմբերի ու համիդիե գնդերի միջոցով հայերին անարգել կողոպտելու քաղաքականությամբ երիտթուրքական կառավարությունը հետամտում էր երկու նպատակ։ Մի կողմից սաստկացնել հայկական վիլայեթներում տարածված տնտեսական ու քաղաքական աղաղակող անիրավությունները, որոնք հայ բնակչությանը կհարկադրեին արտագաղթել, իսկ մյուս կողմից՝ ներսից կազմալուծել հայկական ու քրդական ազգային-ազատագրական շարժումները։ Քուրդ բեկերն ու աղաները, հեշտ ավար ձեռք բերելով, չէին տեսնում չարիքի բուն աղբյուրի՝ թուրքական կառավարության խորամանկ քաղաքականության իրական զսպանակները։ Ուստի, երբ հայ ազատամարտի մի շարք ներկայացուցիչներ քրդական շարժման ղեկավարության հետ համագործակցության եզրեր գտնելու և միասնական հակաթուրքական ճակատ ստեղծելու փորձեր էին անում, հանդիպում էին քուրդ վերնախավի կողմից հայ ազգային-ազատագրական շարժումներն իրենց շահերին ծառայեցնելու կարճատես պլաններ։ Այնինչ, երկու ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները կամրջելու փորձերը, անգամ, մասնակի դեպքերում, կարող էին երիտթուրքական կառավարության համար լուրջ բարդություններ ստեղծել[14]։

Պահպանելով հին պետական ապարատը, երիտթուրքերը հայկական վիլայեթների կառավարման ղեկի մոտ թողեցին արդուլհամիդյան վարչակարգի պաշտոնյաներին, առանձնապես դատավորներին ու ոստիկանապետերին[15]։ Հայ բնակչության նկատմամբ գործվող ոճիրները խրախուսելու քաղաքականությունը երիտթուրքերն իրագործում էին առաջին հերթին ոստիկանության ու ժանդարմերիայի միջոցով։ Վանի վալի Իսմայիլ Հաքքը բեյը ռուսական փոխհյուպատոս Ս. Օլֆերևի հետ զրուցելիս խոստովանում էր, որ «ավազակներին պատժելու համար ուղարկված զինվորները ստանում են բանավոր հրահանգ՝ «չկրակել մահմեդականների վրա»[16]։

Ոգևորված կենտրոնական կառավարության վերաբերմունքից՝ թուրքական ոստիկանությունը քրդական ավազակախմբերի անիրավությունները դատապարտելու փոխարեն հաճախ ինքն էր հրահրում կամ նոր ոճիրների հեղինակ դառնում։ Նրանք ցանկացած ժամանակ, զենք փնտրելու պատրվակով, ներխուժում էին հայերի տները և ապօրինի խուզարկություններ կա-

---

13 Русское слово, 20. XII. 1913.

14 Մանրամասն տե՛ս, Ա. Ս. Համբարյան, Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1979, էջ 284—292։

15 М. Б. Хаджетлаше, Убийца на троне (записки начальника тайной полиции в Турции), Петроград, 1918, с. 6.

16 АВПР, ф. Посольство в Константинополе 1912 г., оп. 517, д. 1603, г. Ван, л. 143.

տարում, որոնք գրեթե միշտ ուղեկցվում էին հափշտակություններով ու շահատակություններով։ Անգամ սառը զենք հայտնաբերելիս հայերին մեղադրում էին ապստամբություն կազմակերպելու մեջ և առանց դատ ու դատաստանի նետում բանտ։ 1912 թ. հոկտեմբերին Տարոնի հայոց հոգևոր առաջնորդ Ներսես եպիսկոպոս Խորախանյանը կաթողիկոս Գևորգ V-ին գրում էր. «Թուրքական ոստիկան զինվորները (ժանդարմա), որոնց պաշտոնը գլխավորապես գավառի ապահովության հսկելն է, չարագործները հալածելով և ձերբակալելով, սակայն իրենք ավազակներեն ոչ նվազ չարիք մըն են գյուղացի ժողովրդյան, զորս կհյուծեն, կխոշտանգեն, կկեղեքեն, որոնցմե ձրի կստանան իրենց և ձիերու կերակուրը...»[17]։

Երիտթուրքական կառավարության հայաջինջ պլաններում կարևորվում էր հայկական վիլայեթներում թուրք գաղթականներին (մուհաջիրներին) վերաբնակեցնելու քաղաքականությունը, որը հետամտում էր մի քանի նպատակ։ Բալկանյան առաջին պատերազմի հետևանքով այնտեղից գաղթող հողազուրկ և տնազուրկ մուհաջիրները հայկական վիլայեթներում կարող էին ստանալ և՛ մշակված հողեր, և՛ պատրաստի տներ։ Այսպիսով, կառավարությունն ազատվում էր նրանց նոր կացարաններով ու աշխատանքով ապահովելու հոգսից։ Սակայն հայ բնակչությունը, բնականաբար, կամովին չէր զիջում իր տունն ու տեղը։ Եվ այստեղ դրսևորվում էր երիտթուրքական կառավարության ողջ չարամտությունը։ Չսահմանափակվելով արտագաղթի հետևանքով հայրենիքը լքած հայերի ունեցվածքի զավթումով, իթթիհատականները կա՛մ մահվան սպառնալիքի տակ, կա՛մ զանգվածային ձերբակալություններով ու բռնի վտարումներով հայերին հարկադրում էին իրենց տունն ու հողը զիջել մահմեդական գաղթականությանը։ Նրանց պահանջախնդրությունների առաջ հայերի բոլոր իրավունքներն արհամարհվում ու անտեսվում էին[18]։

Մուհաջիրների վերաբնակեցմամբ երիտթուրքական կառավարությունը հայ բնակչությանն ստիճանաբար շրջապատում էր մահմեդական մեծամասնությամբ, որը հնարավորություն էր տալիս քրիստոնյա ազգաբնակչությանը մասնատելու ճանապարհով կանխել հակապետական որևէ շարժում կամ ձգտում[19]։ Մուհաջիրների հաստատումն Արևմտյան Հայաստանում ավելի սրեց ազգամիջյան հարաբերությունները։ Պատերազմում պարտության ու, հետևաբար, իրենց ներգաղթի մեղքը կայսրության քրիստոնյա բնակչությանը վերագրելով մահմեդական խառնամբոխն իր վրեժխնդրությունն ուղղում էր արևմտահայության դեմ։

Հայկական վիլայեթներում մուհաջիրների վերաբնակեցումը դադարեցնելու համար Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի և ռուսական դեսպանատան բազմաթիվ դիմումներն ու բողոքները մնում էին ապարդյուն։ Պանթուրքիզմի ձայնափոզերից «Թասֆիրի էֆքյար» թերթը մուհաջիրներին վերաբնակեցնելու քաղաքականությունը հիմնավորում էր այն ցինիկ մեկնաբանությամբ, թե հայ բնակչությունն «անկարող է... մշակել մեծ տարածությամբ ազատ մնացած հողերը»[20]։

Երիտթուրքերը հետևողականորեն շարունակում էին հայերի բռնի իսլամացման քաղաքականությունը։ Նրանց կառավարման տարիներին արևմտահայության իրավազրկության այդ ցայտուն ապացույցը՝ կրոնափոխությունը, կատարելագործվել էր։ Դա պայմանավորված էր ոչ միայն նրանով, որ հայերը երիտթուրքերի աչքին անբարեհույս ու անվստահելի էին, քանի որ հայ ազատամարտը և նրա դիվանագիտական որակումը՝ Հայկական հարցը, եվրոպական երկրների ձեռքին միշտ հարմար առիթ էր կայսրության

---

17 Բանբեր Հայաստանի արխիվների, 1965, № 1, էջ 41։

18 Новое время, 31. V. 1913.

19 Ատոմ, Բարենորոգումներու հարցը, Կ. Պոլիս, 1914, էջ 35։

20 Մշակ. 9. III. 1913։

ներքին գործերին միջամտելու համար, այլև հայկական բնօրրանում արևմտահայ ժողովրդի թվի նվազեցման, նրա դիմահեղման ու մահմեդական տարրի ստվարացման լավագույն միջոցներից էր։ Բռնի իսլամացումներն ու այդ պատճառով ծագող արյունահեղ ընդհարումները, երիտթուրքերի հարմարագույն միջոցներից էին կրոնական մոլեռանդության հողի վրա հայ-թուրքական ու հայ-քրդական արհեստական հակասություններ առաջացնելու և այդ ժողովուրդների սոցիալական ու ազգային-ազատագրական պայքարի կամուրջները խորտակելու համար։ Առաջին աշխարհամարտի նախօրեին Օսմանյան կայսրությունում հայերի բռնի կրոնափոխության բազմաթիվ ու բազմապիսի օրինակներ են հայտնի։ 1912 թ. հոկտեմբերի 25-ին Ղարաքիլիսայի առաջնորդական տեղապահը Կ. Պոլսի հայոց պատրիարքարան էր հեռագրում տեղացի երկու հայուհիների՝ Զմրուխտի ու Անգինի առևանգման, նրանց բռնի իսլամացման ու տեղական իշխանությունների կողմից կրոնափոխությունը վավերացնելու մասին[21]։

Հավատարմորեն ծառայելով թուրքական բուրժուազիայի ու ֆեոդալական վերնախավի շահերին՝ իթթիհատականները ամեն ինչ անում էին, որպեսզի չքավորության ու թշվառության մատնված հայ բնակչությունը վերջնականապես սնանկանա։ Դրա համար միայն պարբերական բազմազան ճնշումները բավական չէին, անհրաժեշտ էր խլել հայ գյուղացիության գոյության միակ աղբյուրը՝ հողը, ու դրանով նրան զրկել տնտեսական հիմքից։ Այդ նպատակին էին ծառայում հայկական վիլայեթներում ստեղծված հողագործական բանկերը, որոնք ամենատարբեր հնարներով կախման մեջ էին գցում հայ գյուղացիներին։ Ահա դրանցից միայն մեկը։ Դրամական խնդրանքով իրեն ներկայացած հայ գյուղացուն բանկը տրամադրում էր անհրաժեշտ գումարը, միայն ստորագրություն էր վերցնում, «որ եթե ճիշտ մի տարուց հետո չվերադարձվի վերցված գումարը իր խոշոր տոկոսով, ապա գյուղացու հողը ձեռքից կգնա առանց որևէ դատարանի կամ վճռաբեկ ատյանի... միամիտ գյուղացին համաձայնում է, որովհետև նրան այդ րոպեին՝ կարիքից դրդված՝ փող է հարկավոր։ Աչքը փակեց տարին անցավ և խեղճ գեղջուկի գոյության միակ աղբյուրը՝ թուրք կառավարության լարախաղաց ճարպիկության շնորհիվ, ձեռքից գնաց ընդմիշտ»[22]։

Սակավահող ու հողազուրկ գյուղացիներին օգնելու նպատակով հիմնադրված բանկերը երիտթուրքական կառավարության հակաժողովրդական քաղաքականությամբ դարձել էին «երկրի աղաների, բեկերի և կառավարական պաշտոնյաների ձեռքին մի տեսակ որոգայթ, խեղդելու համար... չքավոր հայ գյուղացիներին»[23]։

Էրզրումի ռուսական հյուպատոս Ադամովը 1913 թ. մայիսին կենտրոնական կառավարությանը հեռագրում էր, որ թուրքական հողագործական բանկը «վերջին ժամանակներս ուժգնորեն զբաղվում է հայերի հողազրկմամբ, վերջիններիս տրամադրելով արտասովոր բարձր փոխատվություն անշարժ գույքի վրա և այդ ձևով նախապես դատապարտելով նրանց հողերի անցումը բանկի ձեռքը...»[24]։ Այդ ճանապարհով բանկի տրամադրության տակ գոյանում էր հողային ազատ ֆոնդ, որը երիտթուրքական կառավարությունը տրամադրում էր ինչպես քուրդ, այնպես էլ թուրք գաղթականներին։ Այսպես, օրինակ, միայն Բայբուրգե կազայում բանկի միջոցով հայերի հողազրկմամբ առաջացած հողերում տեղավորվեցին յոթ հազար մուհաջիրներ[25]։

Օգտվելով իրենց իսկ ստեղծած տագնապի ու սարսափի ընդհանուր տրամադրություններից, երիտթուրքական կառավարող շրջաններն ավելի

---

21 ՀԱՍՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 24, թ. 4։

22 Մշակ, 29. V. 1913։

23 Նույն տեղում, 17. XI. 1913։

24 АВПР, ф. Посольство в Константинополе, оп. 517/2, д. 3724, л. 12.

25 Русское слово, 22. XII. 1913.

ծավալեցին հայերի հողազրկումը, խլվեցին նույնիսկ որբանոցների, հիվանդանոցների, ուսումնական հաստատությունների հողակտորները, որոնք այդ հիմնարկությունների գոյության հիմնական աղբյուրն էին։

Հողային հարցում երիտթուրքերի հակահայ քաղաքականությունն առավել ցայտուն դրսևորվեց զուլումի տարիներին արտասահմանում պատսպարված հայերի հողերի ապօրինի զավթումներն օրինականացնելով։ Դեռ հեղափոխությունից առաջ երիտթուրքերը պատրաստակամություն էին հայտնում վերադարձնել հայերից խլված հողերը։ Վտարանդի հայերը, հավատալով երիտթուրքերին, սահմանադրության հաստատումից հետո վերադարձան և փորձեցին հետ ստանալ իրենց տունն ու հողը։ Սակայն իթթիհատականները ոչ միայն չօժանդակեցին, այլև սկսեցին անօրինական բռնագրավումներն օրինականացնելով հովանավորել հափշտակիչներին։ Կ. Պոլսի Ազգային ժողովը 1912 թ. դեկտեմբերի 21-ի նիստում, արտահայտելով իր հիասթափությունը երիտթուրքական կառավարության ագրարային քաղաքականությունից, փաստում էր. «մենք նախորդ ռեժիմի շրջանին անիրավի գրավված հողերու վերադարձվիլը կսպասեինք, Սահմանադրության շրջանին մեջ ոչ միայն հուսախաբ եղած ենք, այլ նոր նոր գրավումներն ալ կուդան ստվարացնել հին շարունակությունները»[26]։

1913 թ. սեպտեմբերին անգլիացի Նոել և Հարոլդ Բուկստոն եղբայրները հայ մեծանուն վիպասան Բաֆֆու ավագ որդու՝ Արամ Բաֆֆու ուղեկցությամբ շրջեցին Վանի վիլայեթում, ուր ականատես եղան, թե ինչպես տեղական իշխանությունները հայ շինականներին վտարում էին իրենց պապենական օջախներից և այնտեղ բնակեցնում թուրք ու քուրդ եկվորներին[27]։

Արևմտյան Հայաստանում հողային հարցի ամբողջ ողբերգությունը ստեղծվել էր հենց երիտթուրքական կառավարության ջանքերով[28]։ Հողային վեճերը դարձել էին հայ-թուրքական, հայ-քրդական ազգամիջյան ընդհարումների հիմնական պատճառ։ Իրավացի էր Կ. Պոլսի ռուսական դեսպան Մ. Դիրսը, երբ 1912 թ. նոյեմբերի 26-ին Պետերբուրգ էր հեռագրում, թե Արևմտյան Հայաստանում «Ագրարային հարցը սրվում է օրեցօր, հողերի մեծ մասը զավթված է ու զավթվում է քրդերի կողմից և իշխանությունները ոչ միայն չեն խոչընդոտում, այլև հովանավորում ու օժանդակում են այդ զավթումները»[29]։

Արևմտահայության տնտեսական կյանքի արգելակմանն էին նպատակաուղղված մշտական առևտրական բոյկոտները, որոնց պրոպագանդման ու իրագործման համար մեծ դեր էին խաղում մոլլաները՝ մահմեդական խավարամիտ ու հետամնաց ամբոխին քարոզելով չգնել քրիստոնյաների «պիղծ» ապրանքները։ Բոյկոտները որպես կանոն չէին սահմանափակվում միայն առևտրական հարաբերություններով, այլև ընդգրկում էին կենսական մյուս ոլորտները և միշտ ուղեկցվում էին շովինիստական տրամադրությունների աճով։ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի ազգային կենտրոնական վարչության հաշվետվություններից մեկում կարդում ենք. «Թրքաց շրջանակին մեջ ստեղծված հոսանքը, որ ոչ-իսլամներու հետ առևտրական հարաբերությունները դադարեցնելու կը միտեր, տնտեսապես վնասակար ըլլալե զատ՝ իսլամ և ոչ իսլամ տարբերու բարվոք հարաբերությանց պահպանման ալ վտանգ կ'սպառնար, տեղի տալով այլազան անպատեհություններու»[30]։

---

26 Ատենագրություն Ազգային ժողովո, Կ. Պոլիս, 1912—13, Նիստ ԺԸ, էջ 276։

27 Մշակ, 1. X. 1913։

28 Биржевые ведомости, 23. II. 1913.

29 Сборник дипломатических документов, Реформы в Армении, Петроград, 1915, с. 3.

30 Տեղեկագիր համարատվության 1912—14 շրջանի Ազգային Կեդրոնական Վարչության մատուցյալ առ Ազգային Ընդհանուր ժողովն ի 28 մարտ 1914 թ., Կ. Պոլիս, 1914, էջ 72։

Երիտթուրքական կառավարության քաջալերությամբ քուրդ բեկերի ու թուրք աղակերի սանձակոտոր հարստահարություններն ու շահատակություններն այլևս կասկած չէին թողնում, որ արևմտահայերին բնաջնջելու աբդուլ-համիդյան քաղաքականությունը վերականգնվել էր իր ամբողջ դաժանությամբ ու անզուսպ շովինիզմով։

Թեև 1912—1914 թթ. հայկական վիլայեթներում զանգվածային կոտորածներ չեղան, բայց ամենուր իշխում էր ջարդերի սարսափը, որը սպառնում էր յուրաքանչյուր պահ իրականության վերածվել։ Մշտական վախի մղձավանջային պայմաններում ժողովուրդը զրկվել էր վաղվա օրվա հավատից։ 1912 թ. հուլիսի 15-ին Վանում ռուսական փոխհյուպատոս Ս. Օլֆերևը դեսպան Մ. Գիրսին հեռագրում էր, որ «ոչ ոք վստահ չէ վաղվա օրվա վրա։ Այդ անվստահությունը ցավալիորեն անդրադառնում է բոլոր գործերի և հատկապես, առևտրի վրա»[31]։ Գյուղացին թողած իր հողը, արհեստավորը՝ արհեստանոցը, զենքը ձեռքներին ստիպված էին օրուգիշեր հսկել, որ չարագործները չպղծեն իրենց տան պատիվը։

Երիտթուրքերի հայազերծումի քաղաքականությունը մոտեցել էր գագաթնակետին։ Հայերի անօրինական խուզարկություններն ու ձերբակալությունները ավելի էին սրում առանց այն էլ լարված մթնոլորտը։ Ընդհանուր կոտորածի երկյուղը ուրվականի նման շրջում էր հայկական վիլայեթներում։ Արդեն 1912 թ. աշնանն Էրզրումում ու շրջակա գյուղերում տեղի էին ունենում մահմեդականների գաղտնի խորհրդակցություններ, որտեղ քննարկվում էին քրիստոնյաների համատարած կոտորածի հարցերը։ Իթթիհատական կոմիտեի անդամ Սեյֆուլան, դոկտոր Բեհրեմը, ժանդարմական մայոր Հայդար բեյը և ոստիկանության պետ Դուրակ բեյը հանդես էին գալիս Էրզրումի հայ բնակչությանը բնաջնջելու բացահայտ քարոզներով։ 1912 թ. նոյեմբերի կեսերին Դիարբեքիրում վիճակն այնքան պայթյունավտանգ էր, որ ցանկացած պահ կարող էր սկսվել արյունալի կոտորած, երբ, տեղական վալիի խոստովանությամբ, ոչ ոք չէր կարող պաշտպանել հայ բնակչությանը[32]։

Բժիշկ Լ. Օշերովսկին, որ պատերազմի նախօրյակին աշխատել էր ռուս-թուրքական սահմանային տեղամասերից մեկում, վկայում էր. «Թուրքիայում հայերին ամեն քայլափոխում սպառնում է վերին ու ստորին իշխանությունների կամայականությունը, և հաճախակի են թուրք բաշիբոզուկների կողմից սպառնալի հաշվեհարդարներն ու բռնությունները»[33]։ Հեղինակն ընդգծում էր, որ «Թուրքիայում ոչ մի ժողովուրդ չի ապրում իր կյանքն այնպիսի ողբերգական տանջանքով և օրհասական ճիգով, ինչպես հայերը»[34]։ Մեկ այլ ռուս ականատես՝ Ա. Բերեզովսկին, «Անհետացող Հայաստանը» հոդվածում վկայում էր, որ երիտթուրքերի հակահայ քաղաքականության հետևանքով արևմտահայ բազմահազար աշխատավորության համար իր հայրենիքը վերածվել էր «տանջանքի ու ճնշման, վշտի ու աղքատության հովտի՝ թունավորված մահվան սպասումի ամենօրյա մղձավանջով»[35]։

Զրկված ինքնապաշտպանության ամենահասարակ միջոցներից՝ արևմտահայությունն անկարող էր դիմակայել մինչև ատամները զինված ու կառավարող իշխանությունների կողմից քաջալերվող քրդերի արյունռուշտ ավազակախմբերին։ Բավական էր որևէ մեկն ըմբոստանար, իսկույնևեթ պատժվում էր, կամ ընտանիքի պատիվն արատավորելով (առևանգում էին կանանց, աղջիկներին), կամ նյութական կորուստներով (հափշտակում ու

---

[31] АВПР, ф. Посольство в Константинополе 1912 г., оп. 517, д. 1603, г. Ван, л. 97.

[32] ЦГВИА СССР, ф. 2000 ГУГШ, оп. 1, д. 7716, л. 380—387.

[33] Л. Ошеровский, Идея автономного строя в Турецкой Армении под протекторатом России, Пятигорск, 1915, с. 5.

[34] Նույն տեղում, էջ 11։

[35] Русское слово, 20. XII. 1913.

ոչնչացնում էին անասուններին, այրում տները, խլում հողը) և կամ պարզապես սպանում էին։

Ամենօրյա ահուդողի և մահվան սարսափի մատնված արևմտահայ աշխատավորությունը խորին տագնապով էր դիմավորում 1913 թ. գարունը, որովհետև վստահ չէր, որ ինչպես Արդուլ Համիդի, այնպես էլ երիտթուրքերի օրոք չարագործությունների շարքը նոր ուժով չի վերսկսվելու։ Եվ իրոք, Երիտթուրքերը, նպատակ ունենալով խանգարել գյուղացիության գարնանային գյուղատնտեսական աշխատանքները, սաստկացրին հայահալած քաղաքականությունը։ Ըստ երիտթուրքերի, սովի սոսկալի ուրվականը պետք է միանար չարդի սարսափին՝ կախվելով կոտորածների մղձավանջի տակ սրմքած արևմտահայության վրա։ Բնականաբար, այս որոգայթները նոր որակ հաղորդեցին արևմտահայության դժնդակ կացությանը։ Արդեն գարնանը եվրոպական դիվանագիտությունը կրկին ձեռնամուխ եղավ հայկական հարցի վերարծարծմանը, իսկ երիտթուրքական «պետական հանճարը» եզրակացրեց՝ «Օսմանյան մնացած երկիրները հնարավոր է պահպանել. եվրոպայի ոտնձգություններից՝ հայ տարրը ոչնչացնելով»[36]։ Արևմտահայության կյանքում սկսվեց եղերական մի շրջան, որը ոչնչով չէր զիջելու մեր բազմատանջ ժողովրդի նախորդ ողբերգություններին։

1913 թ. ապրիլի 22-ին Դիարբեքիրում ֆրանսիական հյուպատոսը հայտնում էր, որ վիլայեթում ստեղծվել է լարված իրավիճակ և «չի բացառվում հայերի նոր կոտորածների հնարավորությունը»[37]։ 1913 թ. մայիսին Բիթլիսից Ա. Բերեզովսկին (Օլգենինը) հայտնում էր. «Այստեղ չկա հայ, որը վստահ լինի այն բանում, որ վաղը շուկա դուրս գալով, վայրագորեն խողխողված, կամ գնդակահարված չի լինի, իսկ տանը մնացած նրա կինը կամ աղջիկը՝ պատվազրկված, այստեղ չկա հայ կին կամ աղջիկ համոզված, որ իրեն ամենանողկալի ձևով չի անարգի վայրի սրիկաների հրոսակախումբը, այստեղ չկա հայ ծնող, որ չկասկածի այն բանում, որ դպրոց ուղարկված իրենց զավակները կենդանի կվերադառնան»[38]։

1913 թ. մայիսին Էրզրումի ռուսական հյուպատոս Ագամովը ահազանգում էր, որ երիտթուրքական ագիտատոր, կապիտան Հասան խանը բացահայտորեն կոչ է անում այլևս չուշացնել հայերի կոտորածը և որ դրա համար նա արդեն ստացել է բոլոր քուրդ բեկերի համաձայնությունը[39]։

Ամեն օր Կ. Պոլսի դեսպանատներ՝ հյուպատոսներից ու փոխհյուպատոսներից, հայոց պատրիարքարան՝ թեմի առաջնորդներից, թերթերի խմբագրություններ՝ տեղական թղթակիցներից, հասնում էին գույժեր և օգնության կոչեր, որոնք վկայում էին, որ Արևմտյան Հայաստանում ծավալվող իրադարձությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ ծրագրավորված կոտորածի չարագուշակ նախանշաններ։ 1913 թ. մայիսի 18-ին պատրիարք Հովհաննես Արշաբունու՝ մեծ վեզիր Մահմուդ Շևքեթ փաշային հանձնված հերթական թաքրիրում մատնանշվում էր, որ հայկական վիլայեթներում կատարվող «սպանությունները, բռնությունները, հափշտակություններն ու կողոպուտները, առանց չափազանցությունների, կրում են զանգվածային կոտորածների բնույթ»[40]։

Այնուամենայնիվ, երիտթուրքերին չհաջողվեց 1913 թ. գարնանն ընդհանուր կոտորածի պլանները իրագործել, քանի որ Հայկական հարցը դրվել էր միջազգային դիվանագիտության վիճաբեղանին, և նրա նկատմամբ բոլոր մեծ տերությունները սուր հետաքրքրություն էին ցուցաբերում։ Դա հակասում էր Արևմտյան Հայաստանը անաղմուկ հայազերծելու երիտթուր-

---

36 Նոր հոսանք, 1913, № 2, էջ 467։

37 АВПР, ф. 113, Канцелярия МИД, оп. 470, д. 114, л. 249.

38 Биржевые ведомости, 14. V. 1913.

39 Геноцид армян в Османской империи, с. 255.

40 АВПР, ф. Посольство в Константинополе, оп. 517/2, д. 3726, л. 100.

քական պլաններին։ Բացի այդ, հայ հասարակական-քաղաքական շրջանները դեռ 1912 թ. աշնանից ձերբազատվել էին միշկուսակցական պայքարից և հաստատել համազգային միություն։ Դա երիտթուրքական պրովոկացիաներից և զանազան անպատեհություններից խուսափելու որոշակի պայմաններ ստեղծեց։

1914 թ. օգոստոսին սկսվեց առաջին աշխարհամարտը, որը երիտթուրքերը հայազերծումի քաղաքականությունը գագաթնակետին հասցնելու առիթ դարձրին։ Հայոց ցեղասպանությունը թուրքական կառավարող շրջանների շարունակական քաղաքականության բոլորումն էր։

ИЗ ИСТОРИИ МЛАДОТУРЕЦКОЙ ПОЛИТИКИ ГЕНОЦИДА АРМЯН

М. Е. МАРТИРОСЯН

Резюме

Современные турецкие фальсификаторы истории не признают истребление западных армян в 1915 г. Искажая историю армянского народа в годы первой мировой войны, они пытаются представить геноцид лишь, как переселение, обусловленное обстоятельствами военного времени. В подобной постановке вопроса первоочередное значение приобретает научное освещение младотурецкой политики геноцида армян не только в годы первой мировой войны, но и в более ранний период.

Традиционная турецкая политика истребления армян после прихода к власти младотурок приобрела еще больший размах.

FROM THE HISTORY OF YOUNG TURKS' POLICY OF ARMENIAN GENOCIDE

M. E. MARTIROSIAN

Summary

Modern Turkish falsifications of history don't admit the extermination of the west Armenians in 1915. Falsificating the history of Armenian people during the first world war, they try to present the genocide only as a migration, which was conditioned by the circumstances of war time. In such situation of the question the scientifical elucidation of Young Turks' policy of Armenian genocide not only during the first world war, but also in early period, acquires a primary significance.

The traditional Turkish policy of extermination of Armenians after the Young Turks' advent to power acquired still greater range.